№ 71 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 3 ԱՊՐԻԼԻ ԵՐԿՐՈՐԴ 1919 ՏԱՐԻ ՀԻՆԳՇԱԲԹԻ, 3 ԱՊՐԻԼԻ №71

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Օրգան Հայ Ժողովրդական Կուսակցության Կենտրոնական Կոմիտէի

Խմբագրությունը բաց է ամեն օր առ. ժամը 9-ից մինչև 3-ը։ Ցօդուածները պէտք է գրուած լինեն պարզ և մի երեսի վրայ։ Ցօդուածները կարող են ենթարկուել փոփոխման և կրճատման։ Ընդունուած յօդուածները, որոնց տակ չէ գրուած վարձատրության պահանջ՝ կը հատատուեն ձրի։

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ

Բայտարարությունները ընդունուում են ամեն լեզուով առաջին երեսում 75 կոպ., իսկ վերջին երեսում՝ 50 կոպ. Բժիշկների և աշխատանք փնտրողների համար որոշ գնով։ Մահազգի համար 15 ռուբլի։ Բայտարարությունները նոյն օրուայ թերթի համար ընդունուում են մինչև ժամը 2-ը։

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹ.

ապրիլի 1-ից

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ Է.

1 ամիսը . . . . . 18 ռուբ.
3 » . . . . . 50 »
Հատուածաբար . . . . . 1 ռուբ.

Հասցէն՝ Тифлисъ, Головинскій пр. № 41.

Գրասենեակը բաց է ամեն օր առաւ. ժամը 9-ից մինչև 3-ը, բացի կիրակի և ազգ. օրերից։ Телефонъ 16-90.

„ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ"-Ի

գրասենեակը խնդրում է թերթի բաժանորդներին շտապել վերանորոգելու բաժանորդագրությունը, հակառակ դէպքում թերթի առաքումը կը դադարեցուի ապրիլի 10-ից։

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՖՐԱԿՑԻԱ

Հինգշաբթի, ապրիլի 3-ին, երեկոյեան ուղիղ ժամը 4 և կէսին (Տ. Նազարեանի սալոնում, Գոլովինսկի, 41), նշանակուած է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Օրակարգ.—1) Վերաքննուիչ յանձնաժողովի զեկուցումը ապահանջէսի մասին, 2) Ակումբի ծրագրի հաստատումը, 3) Ընթացիկ հարցեր։ Գրեգիդիան

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ ԵՒ ԴԱՀԼԻՃ

Հինգշաբթի, ապրիլի 3-ին

Ի ՊԱՏԻՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Թիֆլիսի Զօկ գաղութը կազմակերպում է

ԶՕԿԱԿԱՆ

Ներկայացում, Երեկոյթ-Կաբարէ.

Զօկ և գրական բաժիններով։

Բարեհաճ մասնակցությամբ դերասան-դերասանուհիների և սիրողների կը խաղան

I Մինչ. Մանուկեան—«ՀԷՐԻԱԹ» դրամ. էսքիզ 1 արար.
II Զարգայից Ռոս. հաքիմի—«ԱՍՈՒՍԱԾ ԹԱԿԻ ԶՈԿԻ ԽԱՍԻԵԱԹԸ», մասիս. 1 փարդ.
III Շնորհաւորական հանդէս և վերի դահլիճում
IV «ԿԱՌԱՐԷ»—Բազմազան հետաքրքիր ծրագրով՝ ցիգաններին խուսք մասնակցութ. Աննա Օրլովայի, Սահակիանների, պարեր Տ. Սեւումեան օր. Տէրեանի—կուպլետներ, բժ. Ցար. Զարգարեան և Ցար. Թումանեան և այլն։

Շեղ բուֆետ ժամը 7-ից, օրկեստր եւ պարեր մինչեւ մաս 3-ը։

Նոյն երեկոյ լոյս կը տեսնի առաջին Զօկ պատկերազարդ հանդէսը «Զօկի ճրագը», կաբարէի առժամանակները սահմանափակ են։ Դահլիճի մուտքը թատրոնի տոմսակ չունեցողների համար կլուրիցն է, երեկոյթի դուռ արդիւնքը յատկացուած է Գողթան սովեալներին։ ◆ Ներկայացման սկիզբն է 7-ին, կաբարէինը՝ 11 և կէսին։ 1—1

Համաձայն Հոգևոր Իշխանության կարգադրության, առաջիկայ կիրակի, ապրիլի 6-ին (հին առմ. փետր. 24 ին) ս. պատարագից յետոյ, ժամը 12-ին Թանգյեան ս. Աստուածածին եկեղեցում լինելու է

ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎ՝

հին հոգաբարձությունների հաշիւները ընդունելու և նոր հոգաբարձուներ ու անձնափոխանորդներ քնարելու։ Ներկայ հոգաբարձությունը 1917 և 1918 թ. թ. «Համառօտ տպագրուած հաշիւ»-ը գտնուում է եկեղեցու ժամկոչի և իւրաքանչիւր քահանայի մօտ, ծխականները նախօրօք կարող են ստանալ և ծանօթանալ։ Յաջորդօր խնդրում եմ երկուսս չափահաս ծխականներին անշուշտ ներկայ լինել Ժողովին։

Եկեղեցու երէց՝ Շարաբ. Քան. Ճանդուրեան
Երէցփոխ՝ Աբել Դաւխազեան 2—1

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Աշակերտական Ֆրակցիայի ԳԱՏՄԱԴՐԱԿԱՆ ԽՄԲԱԿ.

Կիրակի, ապրիլի 6-ին, կուսակցության բիւրոյում՝ (Գոլով. 41), կը կայանայ հերթական գասախօսութիւն. կը խօսի՝

պ. Խ. ԿԱՆԱՅԵԱՆ

„Հայոց հարցի վերջին շրջանը"

Նիւթի մասին։ (Շարունակութիւն)

Խնդրւում է Աշակերտական և Ուսանողական Ֆրակցիաների անդամներին և նոյնպէս հաճախորդներին ու հետաքրքրուողներին ներկայ գտնուելու։ Սկիզբը ժամը 4 և կէսին։ Գասախօսութենից յետոյ տեղի կունենայ Ֆրակցիայի

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ,

որը քննելու է մի շարք կարևոր հարցեր։ Ժողովը երկրորդը լինելով կը համարուի օրինական։ 3—1

ԲԺԻՇԿ

Խ. ԷՅԷՐՋԵԱՆ

Նախկին ասիստենտ Գարիգի Hotel-Dieu, պրոֆ. Cilbert-ի կլինիկաների, մասնագէտ ներքին հիւանդութիւնների։ Մեթոդիկ բժշկում թոքախտի, սրտի խփոցի, ըլէվրեթի, պրոնխիթի, անարիւնութեան, լեարդի ուռեցքի, arteriosclerosie-ի (շնչերակների կարծրանալ) ասնական անկարողութեան (էմբոլիա-ցիա) և հին գլխացաւի, կերարկութիւն ընթերային մասած սրտի հիւանդութեանց համար։ Ընդունելութիւնք առաւօտ. ժամը 10—12, երեկոյեան ժ. 5—8, կիրակի օրերը միայն 10—11։ Հասցէ՝ Միքայէլեան փողոց № 41։ 100—1

ԲԺԻՇԿ

ԳՐ. Ց. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Նախկին ասիստենտ Ժիլեի համալսարանի կլինիկաների և պրոֆես. Oltramare-ի վեներական հիւանդութիւնների մասնագիտական բուժարան։

ՆԵՐՔԻՆ և ԿԱՆԱՆՑ հիւանդութիւն. մասնագէտ ՎԵՆԵՐԱԿԱՆ (ՍԻՖԻԼԻՍ, ներարկումն «606»-ի և «914»-ի), ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ (ՀԻՆ և ՆՈՐ ՏԻՊԵՐ և նրա կոմպլեկցիաները) և ԿԱՇՈՒԻ ցաւերի։

Էլեկտրաբուժական կաբինետ

Ընդունելութիւնն ամեն օր, առաւ. ժ. 10-ից 1-ը, երեկ. 4-ից 6-ը։ Կիրակի օրերը միայն ժ. 12-ից 1-ը։ Կիրոչնայա, № 11։ 100—73

ԲԺԻՇԿ Ա.Պ.Ե.Տ

Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ

Նախկին ասիստենտ Բերլինի եւ Մոսկուայի համալսարանների կլինիկաների։ Մասնագէտ ներքին հիւանդութիւնների—թոքախտի և սրտի։ Ընդունելութիւնը՝ իր բնակարանում և լոյսի ու էլեքտրաբուժական կաբինետում։ Հետազօտութիւնք և բուժկութիւնք X ճառագայթներով։ Ամեն օր, 9—1 և 5—8 ժամը երեկ. Ռեհրուտովսկայա փ., № 23։ Հեռ. 7—92։ 100—82

ԲԺՇԿ Ա.Պ.Ե.Տ

Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ

(Նախկին Դավիս սանատորիայի ասիստենտ)։

Ներքին և երեխայոց հիւանդութիւնների մասնագէտ, թոքերի և սրտի հիւանդ.։ Ընդունելութիւնը ամեն օր երեկոյեան ժամը 5—7-ը։ Սոլոլակ, Ռուիշևսկայա 3, հեռ. 16—69։ ա. օ.) 100—123

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Հայաստանի պարլամենտի գլխին չարագուշակ ամպեր են կուտակուում, մերձհանրապետության պարլամենտական մեխանիզմը լուրջ ճգնաժամ է ապրում և պարլամենտական կեանքը իր նորմալ հունից դուրս գալով դեռ ևս չի խաղաղուել։

Շնորհիւ Հայաստանի խորհրդարանի նախագահության և կառավարական ֆրակցիաների անփութության, պարլամենտի կառավարական մեծամասնությունն անքաղաքական կերպով փոքրամասնության է վերածուել և այդ ժամանակաւոր և պատահական դէպքը ալեկոծել է պարլամենտի կեանքը։

Փետրուարին 31-ի նիստին օպոզիցիան առաջին անգամ մեծամասնություն կազմեց և կառավարական օրինագիծը «ուժեղացրած գրությունն» մացնելու մասին անխուսափելիօրէն պիտի տապալուէր։

Այս պատահական անաջողությունը օրինական ճանապարհով ուղղելու փոխարէն, կառավարական գլխաւոր ֆրակցիան՝ կենտրոնը չի դնում ոչ մի ուրիշ օրինաւոր միջոց, քան ապատաժի ենթարկել պարլամենտի նիստերը և պարապմունքները։ Դաշնակցական ֆրակցիայի այդ գործելակերպի շնորհիւ խորհրդի մի քանի հերթականնիստերը չկայացան, որի հետևանքով մի շարք կարևոր պետական անկատարելի խնդիրներ անլուծելի մնացին, կառավարության ձեռքերը կաշկանդուած և պետական կեանքը խանգարուած։

Կենտրոնի այդ կացությունը մի խումբ անպատասխանատու անձնաւորությունների ուղղում յանգաւոր և պարզ միտք է յայտնում բանաւորություն դրած դնել պարլամենտի վրայ։

Մեր ապատաժի հակառակ դաշնակցությունը չմիացրեց իր ձայնը ընդհանուրի բողոքներին, նրա օրգան «Ձանգ»-ը ոչ մեայն անկախ մամուլի վարկն է ձգում, լուրթիւն պահանջելով պարլամենտի վրայ կատարուած անթոյլատրելի բռնության առթիւ, այլ և նրա Երևանի քաղաքային կոմիտէն մի թռուցիկ է բաց թողել, որով հրաւիրում է պահանջել, որ ցրուի այժմեան պարլամենտը։

Այժմ, պարզ է, որ փետրուարի 28-ի տխրահռչակ հերոսները մենակ չեն եղել։ Ցաւօրինակ է տեսնել, ինչպէս կառավարական կուսակցությունը իր զեկը կորցրած և պայքարի օրենական պարլամենտական ճանապարհները թողած մի կողմ, յեղափոխական, բռնատարական միջոցների է դիմում և «գոյություն ունեցող կարգերի հիմքը փորում»։

Զափազանց լուրջ են ստեղծուած դրությունը և նրա հետ կապուած քաղաքական հետևանքները, որոնք կարող են անդրադառնալ մեր ժողովրդի և պետության վրայ։ Ինչպէս ցրել մեր քաղաքական մառյալ հոլիգանները հաւաքուած մութ ամպերը, ինչպէս դուրս գալ այդ կացությունից և պարլամենտական ճգնաժամը հարթել։

Անհրաժեշտ է ձեռնարկել ընդհանուր քնարական սկզբունքով հրաւիրելու ամենամօտ ապագայում նոր պարլամենտ. պէտք է կուսակցությունների ներկայացուցչությունն ունեցող այժմեան պարլամենտը տեղի տայ ժողովրդից քնարուած ներկայացուցիչների նոր գեմոկրատիկ պարլամենտին և որպէսզի նոր պարլամենտը ժողովրդական իղձերի և ձգտումների իսկական արտայայտիչը լինի, որպէսզի նա արտացոլի մեր ժողովրդի մէջ գոյություն ունեցող քաղաքական հոսանքների իսկական յարաբերական ոյժը և հարազատ պատկերը լինի մեր քաղաքական իրականության, անհրաժեշտ է, որ կառավարությունը ձեռք առնի բոլոր հնարաւոր միջոցները ապահովելու քաղաքացիների կամքը ազատ և անկաշկանդ արտայայտելու քնարությունների։

Սակայն մինչ նոր պարլամենտի ընտրելը, անհրաժեշտ է նախ երկրում շուտափոյթ կերպով դեմոս մացնել, ապա գոյություն ունեցող պարլամենտը պահպանել, որքան էլ որ վերջինս իր կուսակցական կազմով անհամապատասխան լինի մեր քաղաքական իրականության, այնուամենայնիւ անհանդուրժելի է թէ նրա ցրումը, թէ ժամանակաւոր արձակուրդը։

Չի կարելի այս ծանր պահուն, երբ քաղաքական աշխարհը յղի է անակնկալներով, թողնել երկիրը և ժողովուրդը առանց դերագոյն մարմնի օրէնսդրական հատատուության։

Անկարելի է նաև պարլամենտի օրէնսդրական ֆունկցիաները յանձնել այնպիսի զուտ գործադիր մարմնի, ինչպիսին է մինիստրական խորհուրդը՝ այդ ֆունկցիաները հնարաւոր կը լինեք փոխադրել հանրակտության նախագահին, պրեզիդենտին, սակայն այդպիսին, շնորհիւ մեր պետական մեխանիզմի պակասաւորության, գոյություն չունի։

Պարլամենտի երկու կառավարական ֆրակցիաների յետագայ անյաջողությունները կասեցնելու և պատահաբար խոխուած մեծամասնությունը վերականգնելու համար հարկաւոր է նախ յետ կանչել ցրուած պատգամաւորներին, ապա և նորմալ կարգ հաստատել և ճնայուն համաձայնություն մշակել այդ երկու ֆրակցիաների միջև այժմեան պայմաններում անհնարին է երևակայել, որ միմիայն մի կուսակցություն կարողանայ երկիրը կառավարել։ Մեր երկրի և ժողովրդի քաղաքական վիճակը այժմ մեծապէս կախուած է Դաշնակցության գործելակերպից։

Պէտք է ձեռնարկել նոր պարլամենտի ընտրություններին. սակայն և պէտք է պահպանել այժմեան պարլամենտը։ Զէ որ պարլամենտը մեր ազատության և անկախության գրաւականն ու սիմբոլն է հանդիսանում։

(«Նոր Կեանք»)

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԺԱ.

Հայ երիտասարդության գործունեությունը

Ընդհանրապէս ամբողջ Կովկասում, իսկ մասնաւորապէս Թիֆլիսում հայ երիտասարդության գործունեությունն ընդունել է մասսայական բնոյթ։ Մինչ ուրիշ երկրներում երիտասարդությունն է, որ կազմում է պետականության գարկերակը, մեզանում, այսինքն Հայաստանի կառավարության իրաւասության մէջ, Երևանի քթի տակ ծաւալում է անգործունեությունն ու լքումը։ Նոյնիսկ օտար հորիզոններից դէպի հայրենիք հաղթեցած թրթռուն խմբակներն են հիասթափւում հայկական մթնոլորտում և կանգ առնում մի անհիւրընկալ տեղ, ինչպիսին է Վրաստանի մայրաքաղաքը։ Սառնամից այն կողմ սառնությունն է իշխանաւոր, իսկ գործունեությունը կառավարական սրբազործուած պատասխանն է...

Սա չափազանցություն է, բայց միևնոյն ժամանակ ամբողջի իրողություն։

Այն ժամանակ, երբ հայ գաւակը հաղիւ-հաղ ոգևորուել է վերաշինական եռանդով, երբ հեռուներից է իր հայացքն ուղղել դէպի մայրենի օջախը, հայկական կառավարությունն այնքան անտարբերությամբ է մօտենում երիտասարդության ցանկություններին և պաղ ջրով իջեցնում նրա ոգևորության ասիճանը մինչ մինիմում։

Ինչ էլ լինի մեր կառավարության դրությունը, այնուամենայնիւ գերազանցօրէն անժխտելի է երիտասարդության աշխոյժը հայկական տերբիտորիայի վրայ։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Թիֆլիս, 3 ապրիլի

Ո՞ՒՐ Է ՁԵՐ ԱՄՕԹԸ

—oo—

Գերազանցօրէն իրենց միայն առանձնայատուկ ձևերով ու նրբամիտ խօսքերով ազնազանդ տուին դաշնակցականները Հայ Ժողովրդական Կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի որոշմանը՝ պ. Լևոն Ղուլեանի գործի մասին։

Երկար ժամանակ միանգամայն անպատասխան թողնելով մեր բոլոր դիմումները՝ պ. Ղուլեանի վրայ բարդած մեղադրանքները պարզելու նպատակով կազմել միջկուսակցական դատարան, դաշնակցականները այսօր իրենց հին ու փորձուած միջոցներին են դիմում։ Երբ այլ ևս անհնարին դարձաւ լռութիւն պահպանելը, երբ այլ ևս անյարմար էր ձեւական պատճառաբանութիւններով գործի քննութիւնը յետաձգել և կամ առաջարկը չընդունել, այն ժամանակ «Աշխատաւոր»-ի էջերում դուրս բերուեց միամիտներին խաբելու համար հնարած մի նամակ, որը իբր թէ ուղարկուած է մեզ վաղուց (փետրուարի 18-ին), երևակայեցէք, համարն էլ վրան գրած ունի և նոյնիսկ վաւերացրած է կուսակցական կնիքով և, օ, զարմանք, այդ նամակը... մեզ չի հասել։ Այսպես «Աշխատաւոր»-ը կարևոր է գտնում գնել բազմակէտ, երևի իր զարմանքն արտայայտելու համար, թէ այդ ինչպէս կարող էր պատահել, նամակը չի ստացուել։ Բայց մենք կուզէինք մեր երևակայական հակառակորդներին յիշեցնել մի շատ լաւ ու իմաստուն ֆրանսիական առած, որն ասում է թէ.—«Զեն ստացում միայն այն նամակները, որոնք չեն ուղարկում»...

Պարզաբանութիւններն աւելորդ են։ Եթէ դաշնակցականները (նոյն իսկ Հայ Յեղափոխական դաշնակցականները) ուղարկած լինէին իրենց այդ «օրինակելի» գրութիւնը, պարզ է, որ նրանց ելից զրքումը (разносная книга) կը լինէր նամակը ստացողի, ընդունողի ստորագրութիւնը։ Ո՞վ է ընդունել նամակը, ո՞վ է ստորագրել զրքում։ Գուցէ պարոնայք դաշնակցականները բարի կը լինեն պարզել մեզ այդ յետին թուով գրած ու յօրինած նամակի չեղած անցեալն ու պատմութիւնը։

Բայց թողնենք այս։ Աւելի խօսելն ուղղակի խայտառակութիւն է։ Կարելի է ապաւաղել իրողութիւնը և նորանոր սուտ հնարել, բայց այսչափ կորցնել խիղճն ու ամօթը—մենք մեր հակառակորդներից չէինք սպասում։

Գալով «Աշխատաւոր»-ի այն յայտարարութեանը, թէ պ. Ղուլեանը «այդ մեղադրանքները չհերքելով հանդերձ»... և այլն։ Այստեղ արդէն մենք փաստերի մի նոր խեղաթիւրման հետ գործ ունենք։ Պարոն Ղուլեանը հենց իր նամակը սկսել էր հերքումներով և հենց այն պատճառով դուսի հրաւիրեց մեր ազգային «փախուստի ապէտճառին», որ համարեց նրանց բոլոր գրածները միանգամայն սուտ և զրպարտութիւն։ Եւ գալ այսօր ու պնդել, թէ պ. Ղուլեանը չհերքեց այդ մեղադրանքները՝ կը նշանակի դերազանցօրէն ապաւաղել եղածն ու կատարուածը։

Ահա այսպէս է դրութիւնը։

Եւ այս բոլորից յետոյ դաշնակցական «Աշխատաւոր»-ը եզրակացնում է. «Հայ աշխատաւորութիւնը նոյ բուժուազիայի կենտրոնական կոմիտէից ուրիշ որոշում չէր էլ կարող սպասել»։

Բայց այդ աշխատաւորութիւնը կարծէ էր արդեօք իր «պաշտպաններից», իր «անվեհեր մարտիկներից» սպասել այնպիսի մի սոսկալի դաւաճանութիւն, ինչպիսին նա տեսաւ Բագուում, երբ սեպտեմբերի 18-ին „Пушкинъ“ նաւի վրայ փառաւորապէս տեղաւորուելով, նրանք թողին քաղաքն ու փախան առանց նոյնիսկ նախազգուշացնելու այդ աշխատաւորութիւնը, էլ չենք ասում հայ ժողովրդին, որովհետև Դաշնակցութիւնն արդէն պաշտօնապէս յայտարարել է, որ նա հայ ժողովրդի շահերի պաշտպանը չէ, և «հայ ժողովուրդ» խօսքերի կողքին նոյնիսկ հարցական նշան է դնում։

Ո՞ւր էին աշխատաւորութեան այդ հերոս-պաշտպանները Ալէքսանդրապոլի, Ղարաքիլիսայի անկման օրերին, այն օրերին, երբ իր սև բաղդին յանձնուած հայ ժողովուրդը գլուխը կորցրածի պէս ընկել էր սարեր ու ձորեր և չգիտէր թէ ո՞ւր փնտրի իր փրկութեան յոյսն ու նեցուկը։

Այո, հեշտ է այսօր խօսել հայ աշխատաւորութեան շահերի պաշտպանութեան մասին, բայց գործեր են հարկաւոր, պարոնայք, գործեր։ Ո՞ւր են ձեր այն գործերը, որոնք պատիւ կը բերեն ձեզ և հնարաւորութիւն կը տան ձեզ վայելել նոյն հայ գիւղացիից աշխատաւորութեան յարգանքն ու լիակատար վստահութիւնը։

Գէթ ամաչեցէք ձեր անցեալից։

Մոբիլիզացիա է պէտք այդպիսի թարմ այժերի, փոքր ինչ գործնական աշխատանք, և հայ ամբողջ երիտասարդութիւնը կը կազմէ հրսկայական մի կուռ բանակ՝ կուլտուրական ու առաջադիմական ապարիզում։

Գարնան օրերն աւելի քան աքրամադրում են այդ ոգեշատանքներն իրագործելու։ Ճահիճը պէտք է շարժել բոլոր վայրերում միաժամանակ, ապա սեպհական հողի զարթնող ճիչը կը հասնէ նաև հեռաւոր Ամերիկա ու Հնդկաստան, որտեղից եղբայրական օգնութիւնը կը գայ ամբարձնելու և աւելի ևս բարձրացնելու վերաշինական արամադրութիւնը։

Հայոց կառավարութիւնը մի բոպէ անգամ չպէտք է մոռացութեան տայ, թէ օտար հորիզոնների տակ դեգերում է հայ երիտասարդ գործազուրկների մի հսկայական բանակ, որ հեշտութեամբ կարող է իր քայլերն ուղղել բոլորովին հակառակ ուղղութեամբ՝ այլևս չվերադառնալու որոշումով։

Հ. Գեռ.

ՄԱՄՈՒԼ

«Կաւկազսկօյ Սլովօ»-ն լաւատես է ապագայի նկատմամբ և խօսելով Պարիզի կոնֆերանսի մասին յոյս է արտայայտում, որ

«Ապրիլի մէկից, յերաւի, Պարիզի կոնֆերանսը կը վերջացնի իր մեծ աշխատանքները, որպէսզի սկսի հաստատել վերջնական խաղաղութիւն և, յետոյ, իր մեծ հիմնական որոշումների իրականացումը յանձնի գործնական կատարման համար ժողովուրդների դաշնակցութեան գործադիր մարմնին։

Բայց խաղաղարար կոնֆերանսը, մասնաւորապէս, արդէն սկսել է իրագործել իր մի քանի որոշումները, որոնք մեծ նշանակութիւն ունեն և կարիք չունեն նոր քննութեան։

Այդպէս ամեն բան արուած է ստեղծելու ուժեղ, կարգաւորուած և յարատև Լեհաստան։ Կարևոր և խոշոր մատնանշին միջոցներ են ձեռնարկում միլիոնաւոր զօրքերի սովորական և խաղաղ կեանքը վերականգնելու և նրան դնելու սովորական աշխատաւոր ուղիի վրայ և կենդանի այժերը, որոնք կենտրոնացած են պատերազմի արեան գործերի համար, գործադրել համաշխարհային մի ամենամեծ շինարարական գործի համար, որոնք գործ կրնան աշխատաւոր ժողովրդի ամբողջ բանակների, որպիսին ուրիշ պայման ներում հնարաւոր չէր իրագործել։ Այդպիսի կարգին է պատկանում Լամանշի ջրանցքի շինութիւնը, որպիսին արդէն սկսուած է։ Պատրաստութիւններ են տեսնում վերականգնելու Բելգիայի արդիւնաբերութիւնը և վերսկսելու լեհական գործարանների և զաւոդների գործունէութիւնը... Այդպիսով կարելի է յոյս և հաւատ ունենալ դէպի Պարիզի խաղաղարար կոնֆերանսի աշխատանքները, աշխատելով տեղերում հանգիստ և հաւատով լի դէպի Պարիզի կոնֆերանսի այն ուղղութիւնը և դէպի այն ճանապարհը, որպիսին ընդդծում է նա։

Ցանկալի կը լիներ յարել լրագրի լաւատեսութիւնը, բայց այնքան յաճախ վերջին ժամանակներս ստանհարուել են մեր յոյսերը, որ լրագրի նկարագրած հրաշագործիչ պատկերները մենք դեռ ևս վաղաժամ ենք գտնում։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

—o—

ԿԱՆԱՆՑ ԱԶԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ադրբէջանի հանրապետութեան արտաքին գործերի ս. նունով Երևանից ստացուել է հետևեալ հեռագիրը.—«Այսօր, մարտի 24-ին, Հայաստանի Հանրապետութեանը արտաքին գործերի նախարարին ես յանձնեցի հետևեալ նոտան.—Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերի նախարարին։ Տաճկական զօրքերի Երևանի նահանգից հեռանալուց մի քանի օր յետոյ, հայ ոստանների հրամանատարութեամբ, աշխատանք սկսեցին Նախիջևանի կողմերում և ճանապարհին ուերեկցին Սէյիր, Կտակլու, Շալաբ և Խարբաս գիւղերը, կոտորեցին խաղաղ թուրք ազգաբնակութեանը առանց ծերերի, կանանց և երեխաների բացառութեան, բայց Շարուրում դիմադրութեան հանդիպելով հայ զօրամասերը նահանջեցին դէպի Թաւլու։ Միևնոյն ժամանակ, ուրիշ հայ զօրամաս Զիրմանիսից շարժուեց դէպի Կարախաչ, Շահբալու, Կագիլու, Վերին Ղարաբաղլար, Աղասիբեկլու, Դախնազ և Շեղիղի Դաղ գիւղերը և կոտորեց բոլոր թուրք ազգաբնակութեանը, նախապէս ընտրելով մի քանի հարիւր ամենագեղեցիկ կանանց և օրիորդների, որպէս պատանդներ, որոնք մինչև օրս գտնուում են հայ զինուորների ձեռքին։ Հայ զինուորների վրդովեցուցիչ բոլոր գործողութիւնների մասին թուրք պատգամաւորութիւնը, ժամանակին, տեղեկութիւն է տուել Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը։ Ըստ յանձնարարութեան իմ կառավարութեան, առաջարկում եմ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը՝ անմիջապէս ազատել հայ զինուորների ձեռքից թուրք կանանց և երեխաներին և կազմել խառն յանձնաժողով անգլիացիներից, թուրքերից և հայերից՝ պարզելու յիշեալ գիւղերի թուրքերի ջնջումների քննակութիւնը։

Ցոյս ունեմ, որ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը, ցանկանալով պահպանել Ադրբէջանի կառավարութեան հետ բարեկամական կապեր, առանց յապաղման, ընդառաջ կը գայ իմ կառավարութեան արդարացի պահանջներին։ Խնդրում եմ տեղեկացնել ինձ ձեր կառավարութեան որոշումը և ընդունել իմ լիակատար յարգանքներս։

Գիւանագիտական ներկայացուցիչ՝ Մ. Խան-Տեկինսկի

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԷՋ

Վլադիկաւկազից Բագու եկող մի անձնաւորութիւն հաղորդում է, որ Նալչիկի շրջանի լեռնականների մէջ ապստամբութիւն ծագեց Կամաւորական բանակի դէմ։ Ապստամբել են Բիզինդիևսկու, Խուլամի և Զեգեմի հովիտների կաբարդցիները և բալկարցիները։

Նրանք պահանջում են, որ անմիջապէս հեռանայ Կամաւորական բանակը Նալչիկի շրջանի սահմաններից և կապ հաստատուի Լեռնականների կառավարութեան հետ։ Կամաւորական բանակը այդտեղ ուղարկեց երեք դունդ կոզակներ, ապստամբութիւնը ճնշելու համար։

ԳԵՆ. ՏՈՄՍՈՆԻ ՆԱՄԱԿԸ

Լեռնական կառավարութեան նախագահ պ. Կոցևը ստացել է գեն. Տոմսոնից մի նամակ, որի մէջ կայ, ի միջի այլոց, երկու կէտ.—1) Կամաւորական բանակի լեռնականների կառավարութեան հողամասը մտնելիս ինչ տեսակ իրաւակարգի խախտումն է կատարուել նրանց կողմից. 2) Ի՞նչ քայլել է արել լեռնականների կառավարութիւնը։ Կամաւորական բանակի հրամանատարութեան հետ ունեցած տարաձայնութիւնների առաջն առնելու համար։

ԹԵՄԻՐ-ԽԱՆ-ՇԱՒՐԱ

Բազմահազար միտինգը որոշում կայացրեց՝ դիմում անել Ադրբէջանի և Վրաստանի պարլամենտներին և Դաշնակից հրամանատարութեանը, բողոքելով Գենիչիի յարձակման դէմ, որը թափում է լեռնականների անմեղ արիւնը։ Որոշեցին կրուուել ազատութեան համար մինչև վերջին մարդը։ Կռիւները տեղի ունեն մարտի 26-ից Սունժէնի և Արգունի-Ուրուս-Մարտան գծերի վրայ։

ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Կամաւորական բանակի զեկավարութեամբ գեն. Լեանովը նոր արշաւանք սկսեց լեռնականների հանրապետութեան դէմ Զեչնայում՝ Ալխան-իւրտա և Ուստար Գորդոյեա գիւղերի շրջաններում։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՎՐԱՑ ՀԵՌԱԳՐԱԿ. ԳՈՐԾ.)

—o—

ԲՈԼՇԵՎԻԿԱԿԱՆ ՀԱՂՈՐԴ.

Օդեսայի պաշարումը

ՕԴԵՍՍԱ.—Մեր զօրքերը բոլորովին մօտեցան Օդեսայի գիրքերին։ Սկսուեցին կուռագի կռիւներ քաղաքից մի քանի վերստ հեռու։

Գերմանական կառավ. նանայումը

ՍՏՈԿՀՈԼՄ, 28 մարտի.—Բելգիայի լրագիրների հաղորդագրութեան համաձայն, Եվեցիան ընդունում է գերմանական նոր կառավարութիւնը և խնդրում է ուղարկել Եվեցիա գերմանական ներկայացուցիչ։

Պայքարներ Պետրոգրադում

ՄՈՍԿՈՒԱ, 1 ապրիլի.—Պաշտպանութեան Խորհրդի նախագահ Լենինի տելեֆոնոգրամը համաուսական արտակարգ յանձնաժողովին.—

«Պետրոգրադի համաուսական արտակարգ յանձնաժողովից ստացուած են տեղեկութիւններ, որ Կոլչակի, Դենիկինի և Դաշնակիցների գործակալները աշխատում էին պայթեցնել Պետրոգրադի Ջրմուղու կայարանը։ Նկուղում գտնուեցան բանկոր նիւթեր, նոյնպէս և գծոխային մեքենայ, որպիսին վերցրեց պահապան կազմը ոչնչացնելու համար։ Անժամանակ պայթիւնից սպանուած է զօրամասի հրամանատարը և վիրաւորուած են 10 հոգի կարմիր գւարդիականներ։ Առանձին կէտերում փորձեր են լինում պայթեցնել կամուրջները։

Հակա-կառավարական փորձեր

ՊԵՏՐՈԳՐԱԴ։ Սոցիալիստ-յեղափոխականները և փոքրամասնականները գործնական մասնակցութիւն ունեն գործադուլային կռիւների և խորհրդային իշխանութիւնը տապալելու մէջ։ Պաշտպանազական խորհուրդը ստանալով շատ միջոցներ ձեռնարկել հակա-կառավարական ամեն փորձերը ճնշելու համար։ Պաշտպանութեան խորհրդի նախագահ Զինովյև-Լենին։

Ճեմարանների միացումը

ՊԵՏՐՈԳՐԱԴ, 1 ապրիլի.—Դեկրետ է հրատարակուած գործնական ճեմարանը Պետրոգրադի Առևտրական ինստիտուտի հետ միացնելու մասին։

Օչակովի գրաւումը

ՆԻԿՈԼԱԵՎ, 31 մարտի.—Օչակով ամրոցը, որը գտնուում է Նիկոլաևի և Խերսոնի մէջ, գրաւած է խորհրդային զօրքերով։

Ընդունելութիւն Ռակովսկու մօտ

ԿԻԵՎ, 31 մարտի.—Երէկ, տեղական զեղարուեստական կազմը ընդունելութիւն ունեցաւ Ռակովսկու մօտ, պարզելու այն խնդիրը, թէ ճանաչում են արդեօք օտար կառավարութիւնները Ուկրայնայի խորհրդային իշխանութիւնը, որպէսզի կարելի լինի այնտեղ դեսպաններ ուղարկել։ Ռակովսկին թոյլ տուեց օգտուել ռադիո-հեռագրով 10 օրուայ ընթացքում։

Օդեսայի դրութիւնը

ԿԻԵՎ, 31 մարտի. — Օդեսայի օրերը համարուած են. բուրժուազիայի և Կամաւորականների որմզդուութիւնը ճնշուած է։ Ֆրանչէ գ'Էսպերը և Վերնեյան մեկնեցին Դ. Գալիս։ Գրիշին Ալմազովը և Ստանիսլաւովը հրաժարական տուին և Ֆրանսիական նաւով գնացին Դենիկինի կայանը։ Նրանց հետ միասին դուրս գնացին խոշոր բուրժուաներից և ստաբճառուորներից աւելի քան 500 մարդ։ Օրէցօր վատանում է Օդեսայի պաշտպանութեան դրութիւնը։ Մթերքների ներմուծումը բոլորովին դադարեց։

Կոնճերտանսի վճիռները

ԼԻՈՆ, 31 մարտի։ Այսօրուայ խորհրդաժողովի մէջ Վիլսոնը և Լլոյդ Ջորջը հնարաւոր չհամարեցին Դանցիգը Լեհաստանին յանձնելու, իսկ Ֆրանսիային գերմանական հողամասերը։ Գերմանիան կարտաց ցաւութեամբ էլզաս-Լոտարինգիայի։ Ֆրանսիան պէտք է ընդունի այդ պայմանները, հակառակ գեղեցիկ պատակուելու անխուսափելի է։

Ժորեսին սպանողը արդարացրած

ԼԻՈՆ, 31 մարտի։ Ժորեսին սպանողը արդարացրուած է։ Ֆրանսիական սոցիալիստները պրոֆեսիոնալ միութիւնների հետ հարցէս էլ պատրաստուում է բոյկոտելու բուրժուական պատարանի վճռի դէմ, որը արդարացրել է ժարգասանին։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Էրցբերգերը լիազօրուած

Գերմանական կառավարութիւնը գերման-լեհական վիճելի հարցերը որոշելու համար լիազօր ներկայացուցիչ նշանակեց գինապետարանի գերմանական յանձնաժողովի գլուխ Էրցբերգերին և ուղարկեց հետևեալ նոտան.—Մարշալ Ֆոշին.—«Կենտրոնական նախարարութիւնը իր լիազօր ներկայացուցիչ նշանակեց Էրցբերգերին, որը լիազօրուած է Պոզնում, ապրիլի 3-ի բանակցութիւններին մասնակցելու։

Բժ. Ֆրիդրիխ Ադլեր

Բժ. Ֆրիդրիխ Ադլերը Վիեննայի բանուորական ժողովում յայտնեց, որ Գերման-Աւստրիայի համար ներկայումս բոլորովին անհնար է միանալ բոլշևիկական Ռուսաստանի հետ։ Այդ յայտնութիւնը մասսաների վրայ ունեցաւ հանգստացուցիչ ազդեցութիւն։

Լեհաստան

Հաւատի գործակալութիւնը հաղորդում է, որ Դաշնակիցները պատրաստուում են հակապատասխան միջոցներ ձեռնարկել Ռուսաստանից դէպի Լեհաստան բոլշևիկութիւնը արգելելու համար։ Ամեն բան կանուի, որպէսզի Լեհաստանը միջոցներ ունենայ իր սահմանները պաշտպանելու, որպիսին ներկայումս որոշուել է Պարիզում։ Զեխо-սլովակները մթերքներ են ուղարկում Լեհաստանին։

Դանցիգի զօրամասը աւելացրած

Գերմանացիներին առաջարկուած է աւելացնել Դանցիգի զօրամասը և ափերի մօտ գնել թնդանօթներ։ «Թայմսը» ասում է, թէ Գերմանիայի նպատակը ոչ թէ պատերազմական է, այլ քաղաքական։

Դաշնակիցները հեռանում են Բուդապեշտից

Դաշնակից դրաւող զօրքերը գնացին դէպի Ցեպիդին։ Զինուորական յանձնաժողովը և ամերիկեան բոլոր սպաները թողին Բուդապէշը։

Աշխատանքի յանձնաժողովի որոշումները

Միջազգային աշխատանքի օրէնսգիրք յանձնաժողովը վերջացրեց իր զեկուցումը, որոնց նախագծում են գլխաւորապէս հետևեալները.— 1) Աշխատանքի ամենաբարձրագոյն օրական 8 ժամով. 2) Խրաքանչիւր բանուորի ամենայուն աշխատավարձի իրաւունք. 3) Նման աշխատանքների նոյն աշխատավարձ թէ կանանց և թէ մարդկանց համար. 4) ոչ մի անչափահաս մինչև 14 տար. հասակը չի կարող վարձուել. 5) 14—18 տար. հասակաւորներին աշխատանքը չպէտք է արգելք լինի նրա ֆիզիկական զարգացման, գործնական կամ ընդհանուր կրթութեան։ Ծովագնացների պայմանների կարևոր հարցերը կը քննուեն առանձին խորհրդաժողովի մէջ։

Բաղաքացիներ, անդամագրուեցէք Հայ Ժողովրդական Կուսակցութեան։ Անդամագրուել կարելի է Կուսակցութեան բիւրոյում՝ Голоническій пр. № 41, ամեն օր ժամը 10-ից մինչև 2-ը։

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Դաղթականների խնամատարութիւնը.—Հայաստանի կառավարութեան որոշման համաձայն, Վրաստանում գտնուող Հայաստանի հպատակ գաղթականների խնամատարութեան գործը յանձնուած է Հայաստանի խնամատարութեան մինիստրի լիազօր Դ. Քալիքեանին, իսկ վրացահպատակ հայ գաղթականների գործերը վարելու է Վրաստանի Ազգային Խորհուրդը։

✦ Արդարադատութեան մինիստրութեան վերակազմութեան հարցը.—Վրաստանի արդարադատութեան մինիստրութեան մէջ տեղի ունեցաւ խորհրդակցութիւն մինիստրութեան վերակազմութեան համար։ Խորհրդակցութեանը մասնակցում էին դատական վարչութեանց ներկայացուցիչները, նախագահում էր արդարադատութեան մինիստրի օգնական Ս. Ջափարիձէն։ Խորհրդակցութեան փոքրամասնութիւնը այն կարծիքի է եղել, որ պիտի մինիստրութիւնը լուծել, որպէս անկախ մինիստրութիւն իսկ մեծամասնութիւնը կողմնակից է եղել, որ մինիստրութիւնը մնայ իբրև անկախ մինիստրութիւն, այնպէս, ինչպէս ներկայումս գոյութիւն ունի։ Այս առաջարկն ընդունել է ձայների մեծամասնութեամբ։

✦ Սահմանադիր Ժողովի նիստը.—Այսօր կայանալիք Վրաստանի Սահմանադիր Ժողովի հերթական նիստը յետաձգուած է վաղուան։

✦ Կողոպուտներ.—Մարտի 1-ի գիշերը վեց զինուած չարագործներ մտնելով «Շամախի» հիւրանոցը, բնակիչներից մահուան սպառնալիքի տակ կողոպտելով 31,000 ռ. անյայտացել են։

— Անյայտ ոճրագործներ տիրող բացակայութեան միջոցին Բելինսկայա փ. № 18 տանը բնակուող Աստարովի բնակարանից գողացել են մօտ 40,000 ռ. զանազան իրեր և դրամ։

✦ Մարտի 2-ին Ա. Գլուշկիի բնակարանը մտնելով (Առաջին Ասեստրական գաղրոցի մօտ) միջանի զինուած անձինք մահուան սպառնալիքի տակ տարել են 8000 ռ. և անյայտացել։

✦ Հասարակական ակումբ.—վերակսում է իր շաբաթօրեայ հաւաքոյթները. ապրիլի 5-ին Վ. Եաստրեբովը խօսելու է «Արևելեան Եւրոպայի ապագայ վիճակը» նիւթի մասին։ Գեղախօսութիւնից յետոյ՝ զրոյց։ Մուտքը անպատեների համար ձրի է, հիւրերի համար 1 ռ. Սկիզբը երեկոյեան ժամը 7։ Անդրկովկասեան համալսարանի ֆիզիքական լսարան. Գոլովինսկի, 10։

✦ Դասախօսութիւն.—«Ընդհ. Հայ Ուսանող. Միութիւնը» շաբաթ, ապրիլի 5-ին, երեկոյեան ժամը 7-ին Կոնսերվատորիայի գահլիճում կազմակերպում է դասախօսութիւն ս. Սուրբխանեանի «Համաշխարհային յեղափոխութիւնը և մարդկութեան ապագան» նիւթի մասին. դասախօսութիւնից յետոյ կը լինի վիճաբանութիւն, որին կը մասնակցեն հասակակցական հրաւիրուած ներկայացուցիչներ։ Տոմսերը կարելի է ստանալ «Ժողովրդի Ձայն», «Աշխատաւոր» թերթերի դրասենեակներում, առաւ. ժամը 11-ից մինչև 2-ը։

ԱՅՍՕՐ

Երեկոյեան ժամի 5-ին Կ. Հ. Բ. Ընկ. տանը կը կայանայ Հայրենակց. Միութիւնների Կենտրոնական Խորհրդի նիստը։

ԹԻՖԼԻՍԻ ԲՈՐՍԱՆ

2 ապրիլի

Ռուս վալիւտայի առաջարկը զդալի կերպով աւելացաւ, և այդ պատճառով դները քիչ իջել են։ Անգլիական վալիւտայի դրութիւնն ամուր է։

Այսօր «Նիկոլևսկի» 100 ռուբլիանոցները ծախւում էին 100 տոկոս յաւելումով, 500 ռուբլիանոցները 96 տոկոսով, և մանրերը 55 տոկոս յաւելումով։ «Կերենսկու» փոդերի դրութիւնը անփոփոխ է՝ 1000 ռուբլիանոցները 28 տոկոս յաւելումով, 250 ռուբլիանոցները 23 տոկոսով և մանրերը 12—8 և կէս տոկոս յաւելումով։

Անգլիական ֆունտ ստերլինգները վաճառւում էին 135 ռ. բանկնոտները և 105 ռ. չեկերը։

Ֆրանսիական ֆրանկներ նոմինալ գինը 4 ռ. 25 կ. բանկնոտներ, Շեյցարիայի ֆրանկների 4 ռ. 75.։

Իպատեչի թղթերից բաւական Թանգացան Թիֆլիսի Բաղաքային Վարկային ընկերութեան օրլիգացիաները, որոնց վճարում էին 104—105 ռ., ժամանակաւոր անգրագրերը 102 ռ.։

Դիւիդենդ տրժէթղթերից պահանջում էին Էքսպորտ և Իմպորտ ընկ. ակցիաները—135 ռ. և Կովկասեան ապահովագրական ընկ. ակցիաները 120 ռ., Վաճառականական բանկի նոր ակցիաները 405 ռ.։

Ուրիշ ակցիաները չը ընտրուեցին։

Զեկերի փոխանակութեան համար պահանջում են 20 տոկոս։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՏԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի հանրապետութեան արտաքին գործերի նախարարի նամակի պատճէնը Վրաստանի հանրապետութեան արտաքին գործերի նախարարին, մարտի 24-ից 1919 թ. № 824.

Վրաստանի հանրապետութեան կառավարութեան՝ մեր կառավարութեան գլխաւոր գիտակցութեան ներկայացուցիչը ուղարկել մեզ մի նոտա 1654, 8-ից այս մարտի, որով գուք, պ. Նախարար, ձեր կառավարութեան յանձնարարութեամբ տեղեկացնում էք Հայաստանի կառավարութեանը, որ նա ճանաչում է Հայաստանի Հանրապետութիւնը որպէս մի ինքնուրոյն, անկախ պետութիւն։

Հայաստանի Կառավարութիւնը լի ու լի բաժանում է այս հայեացքները, որի համապատասխան Վրաստանի կառավարութիւնը կարևոր համարեց յայտնելու իր յիշատակուած նոտայով՝ ճանաչել Հայաստանի Հանրապետութիւնը որպէս մի ինքնուրոյն, անկախ պետութիւն։

Որ համոզուած լինելով, Անդրկովկասի հողամասերի վրայ կողմակերպուած հանրապետութիւնների շահերի միութեան գիտակցութիւնով, նրանց էական կեցութեան և ապահով բարգաւաճման մի շարք խնդիրների վերաբերութեամբ, Հայաստանի Հանրապետութիւնը ուրախ է և Վրաստանի կառավարութեան այդ արձանագրութիւնն ընդունում որպէս մի ապացոյց սոլիդարութեան և փոխադարձ վերաբերմունքի գիտակցութիւն։

Հայաստանի կառավարութիւնը իր կողմից իր պարտաւորութիւնն է համարում հաստատել ձեր կառավարութեան առաջ, որ նա ճանաչում էր և ճանաչում է Վրաստանի դեմոկրատիկ հանրապետութիւնը որպէս անկախ և ինքնուրոյն մի պետութիւն։

Մտորագրեց՝ Հայաստանի հանրապետութեան արտաքին գործերի նախարար՝ Ս. Տիգրանեան։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այս վերնագրով մեզ հասցրել են հետևեալ հետաքրքրական փաստաթուղթը, որը կարևոր ենք գտնում արտատպել առանց փոփոխութեան.

Օրդուբաթ, 1918 թ. օգոստ. 8.

Կովկասեան մահմեդական կառավարութեան կողմից ես նշանակուած եմ Օրդուբաթի և նրա շրջանի կոմենդանտ և Աստուծոյ օգնութեամբ այսօրուանից դիմել եմ պարտականութիւններիս կատարման։

Կովկասեան մահմեդական կառավարութիւնը կամենում է, որ բոլոր նրա հպատակները առանց կրօնի և ազգութեան խտրութեան գիմեն խաղաղ ու հանգիստ կեանքին ու տեղ չը լինի ոչ մի արիւնհեղութեան, որովհետև մեր նպատակը ոչ թէ արիւնհեղութիւն է, այլ նրան վերջանալ է։ Այդ նպատակին հասնելու համար բոլոր իմ հրամանները պէտք է անշուշտ կատարուեն քնակիչների կողմից առանց կրօնի և ազգի խտրութեան։ Հակառակ դէպքում ես դիմելու եմ բռնի միջոցների։ Ցոյս ունեմ, որ ոչ մի հակակառավարական ընդհարումներ տեղի չեն ունենալ։

Մահմեդականների և նոյնպէս հնազանդ հայերի քարեկեցութեան համար հրամայում եմ թողնել թշնամութիւնը և կոչում եմ դէպի համերաշխ աշխատանքները։ Ամեն մէկը պէտք է զբաղուի իր գործով և չյարձակուի ուրիշի ունեցածի վրայ։ այն անձնաւորութիւնները, որոնք կը խանգարեն հասարակական կարգ ու հանգստութիւնը՝ կենթարկուեն ծանր պատժի։ Երջանկայի հարևան հայկական գիւղերը, որոնք ներկայումս հնազանդուել մեզ, պարտաւոր են յանձնել զէնքը, որովհետև մինչև այսօր բոլոր մահմեդական գիւղերը ենթարկուում են յարձակումների հայերի կողմից։

Այն օրից, ինչ ես Նախիջևանի շրջանումն եմ, իմ հաւաքած հատատ տեղեկութիւններից ամբողջ Անդրկովկասում քանդուած է մինչև երեք հարիւր մահմեդական գիւղ, իսկ նոյն ժամանակ հայկական գիւղերի թիւը հասնում է 3-ից մինչև 5 հարիւրի։

Այդպիսով փաստերը ապացուցանում են, որ խաղաղութիւնն և հանգստութիւնը խախտողները ոչ թէ մահմեդականներն են, այլ հայերը։ Այդ պատճառով մենք (այն է՝ կովկասեան մահմեդական կառավարութիւնը) չենք կարող լիակատար հաւատ ընծայել հայերին։

Այն հայերը, որոնք կը յանձնեն զէնքերը՝ կը համարուեն մեր սիրելի հպատակները և նրանց պատիւը, կեանքը և գոյքը մեր հովանաւորութեան տակ կլինեն ու նրանց դէմ ոչ մի գործողութիւն տեղի չեն ունենայ։

Այն հայ գիւղերը, որոնք չեն յանձնի զէնքը, կը համարուեն հակառակորդ մեր կառավարութեան և դրանց դէմ կը գործադրուեն խիստ միջոցներ։

Բոլոր տատի հիման վրայ, իմ առաջին ցանկութիւնն է տեսնել այդ ազգութիւնները միշտ հաշտ, ինչպէս եղբայրներ։ Խնդրում եմ, պարոններ, որ իմ ցանկութիւնները իրագործուեն։

(Կնիք)

Խալիլ բեյ

ՀԱՅ ԲԵՄԻ ՊԱՇԱՆՋՆԵՐԸ

I

Այն ժամանակ, երբ վերածնւում էր հայ գեղարուեստը, երբ հայկական դժգոյն հորիզոնի վրայ երևացին Գր. Արծրունին, Ռաֆֆին, Գամառ-Բաթիղան և Նազարեանների նման խոշոր դէմքերը, երբ հայ երաժշտութիւնը իր սկզբնական շրջանում ունեցաւ մի Կարա-Մուրզա և հայ թատրոնը մի Ադամեան, մի Սիրանոյշ անա այդ է այն փառաւոր անցեալը, որը հիմք պիտի լինէր ժամանակակից հայ թատրոնի, որը շարունակութիւն պիտի լինէր ժամանակակից՝ իր գոյութիւնը քարշ տուող՝ հայ թատրոնը։

Ագամեանը մեզ համար հոգ պատրաստեց, բայց այդ հոգից մենք չգտուեցինք. նա հայ մարդուն ու հայ կնոջ առնից դուրս բերեց և նրա անտոմոր աչքերի առաջ բացեց հայ թատրոնի հրապուրիչ հորիզոնը, բայց մենք մոռացնել տուինք այն մեր ժողովուրդին։

Նա իր խոշոր ատաղձի ընդարձակ վարակեց հայ մարդուն գեղարուեստական ազդուածներով գոտեմարտակից որպէս ճանդիսական և մենք այդ հանդիսանքի տրամադրութիւնը չկարողացանք օգտագործել մինչև մեր օրերը։

Այն ժամանակ երևան չեկան հայ թատրոնի մեկենասները, որ իրենց լիառատ սրտով հայ թատրոնը գնեին աւելի ամուր հիմքերի վրայ։ Եւ ահեղից առաջ հայ դերասանի համար հայ թատրոն չինեին։ Տարիներ շարունակ ապառում է հայ դերասանը մի ֆոնդի, մի նուիրաբերութեան, կամ մի մեկենասի, որ փրկի իրենց այդ նեղ վիճակից ու դնէ գուսանի քննկեալուց։ Բայց ի դուր։ Արդեօք պատահել էք մի յարկեան, որտեղ ճառերի տարափի մէջ շնչատիպ չէր պահանջուեր հայ թատրոնի շէնքը։ Արդեօք տեսել էք թէ ինչպէս հայ դերասանը անտուն ու բնաւորի նման ժուրցել է մի քանի ներկայացումներ տալու։

